ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանում քաղաքացիական ծառայության ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 61-3.1-9)

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

-տնտեսագիտություն /էկոնոմիկա/ և կառավարում /մենեջմենթ/ մասնագիտությունների գծով կամ իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ

Գործառույթները.

-մասնակցում է ներքին աուդիտի կանոնակարգի նախագծի, ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի մշակման, ինչպես նաև վերանայման աշխատանքներին

-մասնակցում է ներքին աուդիտին.

-աուդիտի ընթացքում բացահայտված կեղծիքի նշանների, աուդիտի սահմանափակումների վերաբերյալ անմիջապես տեղեկացնում է Բաժնի պետին.

-մասնակցում է ներքին աուդիտի տարեկան հաշվետվությանը կազմման աշխատանքներին.

-մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

- իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ

- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 13-ը օգոստոսի 2018թ.:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերի պատճենները իսկականի հետ միասին.

- դիմում /լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.

- անձնագիր

-դիպլոմ

-աշխատանքային գրքույկ կամ աշխատանքային ստաժի վերաբերյալ անհատական հաշվի քաղվածք

- արական սեռի անձինք նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին

- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

Աշխատավարձը կազմում է 175.932 դրամ /մեկ հարյուր յոթանասուն հինգ հազար ինը հարյուր երեսուներկու դրամ/:
Տվյալ որոշակի ժամկետով թափուր պաշտոնի վերացման ժամկետը՝ հիմքի վերացումը:
Ժամանակավոր թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից մինչև 13:00-ն,բացի շաբաթ և կիրակի օրերից:
Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան 4:
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով 0232 3-53-83:
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի էլեկտրոնային հասցե՝ aragatsotn.andznakazm@mta.gov.am